

սպած նոյն հաստատութեան «Աղքատների և հիւանդների բարեկամ» թերթից՝ Christ. Welt-ի 29 հ.ում խօսելով մինչև այդ ժամանակ հրատարակուած երեք տետրակների մասին՝ Ռադէն մեծ ուրախութեամբ ողջունում է նոցա հանդէս գալը թէև անյաջող է համարում առհասարակ նոցա խմբագրութիւնը։ «Ա. տետրակը» ասում է նա՝ բաւական անյարմար է մեր դէպի հայերն ունեցած պարտականութեան մասին մի ուղիղ գաղափար տալու համար։ Իսկ այդ ամենից կարևորն է, որովհետև իրողութիւնը դժբաղդաբար ամենևին այնպէս չէ, ինչպէս ներկայացնում է Գր. Գիսելհոֆ, առաջին իսկ երեսում գրելով հայերի տառապանքները ոչ մի սիրտ պող չեն թողնում։ Յառաջարանին հետևում է այդտեղ իբրև առաջին հատուած՝ Ձէյթունի պաշարման մի նկարագրութիւնը, պատերազմական սոսկալի մի արկած։ Ինչպէս յայտնի է Ձէյթունում հայերը բացառապէս այնպիսի դիրքի մէջ էին, որ կարող էր տաճիկների դէմ հաւասար ուժերով և բաւական յաջողութեամբ կռիւ վարել։ Մինչդեռ հայկական արհաւիրքների բոլոր մնացած ընդարձակ տարածութեան վերայ այդ թշուառ ժողովրդի անմեղութիւնն ու անձարակութիւնը բոլորովին ուրիշ կերպ են երևան դալիս։ Կան յետոյ թէև այլ տեսակ տեղեկութիւններ, բայց այդ Ա. տետրակը չէ առաջնորդում դեռ եղելութիւնները լաւ հասկանալու։ Առհայտ փոխարէն այդտեղ կրճատ ձևով Ա. է գրած՝ անտեղի բոլորովին, որովհետև ամենքն իրաւունք ունին պարզ տեղեկութիւններ առնելու և այսպիսի զգուշութեամբ ոչինչ և ոչոք պաշտպանուած չի լինի։ — Բ. տետրակն արդէն աւելի լաւ է՝ սարսափների համառօտ պատմութիւններով հարուստ։ Շատ լաւ է վերջապէս Գ. տետրակը։ Այդտեղ տեղեկութիւն է տրուում նախ հայ որբ երեխաներ Ձմիւռնա տեղափոխելու դժուարութեան մասին. ապա պատմութեամբ է նահատակ Հոպսո («») Արուհայեթեանի մասին, որ բողոքական պատար էր Առհայում։ Պակաս չեն այստեղ վերջապէս նաև աշխարհագրական ու պատմական տեղեկութիւններ և այլ հրահանգիչ ցուցմունքներ, որ իրաւամբ պէտք էր այսպիսի թուուցիկ թերթերից սպասել՝ ճնշուած ժողովրդի բնաւորութեան ու անցեալին մօտից ծանօթանալու համար։ Այդ տետրակից առնում ենք հետևեալ նկատողութիւնը։

Ամերիկացիք (American Board) 1818 թ.-ից սկսած միսիոնարական ընդարձակ գործունէութիւն ունին Փոքր Ասիայում և մասնաւորապէս այն մասում, որ առաւել ասպարէզ է եղել հայկական խառնակութիւնների, Փոքր Ասիոյ մէջ, որ երկը

միսիոնարական գաւառների է բաժանուած, 14 գրականոր և 268 երկրորդական կեդրոնավայրերում 45 ամերիկացի և 90 բնիկ հոգևորականներ ու 529 բնիկ ուսուցիչներ են աշխատում, 111 եկեղեցիներ կան 11835 ծխականներով, և 19812 տղաներ ու աղջիկներ այցելում են զանազան բարձր և ստորին կարգի դպրոցներ։— Հասկանալի է որ ամերիկական միսիոնի այս բողոքական խնամարկեալները թէև միայն մասամբ, բայց մեծ մասամբ հայեր են։

Կ. Վ.



ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ.

Ս Գ Ո Յ Օ Ր Ե Ր .

Թէ՛ ոգևորուիլ կարող ես կրկին, Թէ՛ կարող ես դեռ կըրակուիլ վշտից՝ Սի՛րտ իմ՝ շարատանջ, այս սուգն ահագին չերիք է որ դու պատառուիս ցաւից։

Բարդ թարդ կուտակուած ամպեր քո գլխին, Սորանից էլ սեւ կը լինի թախիժ . . . Ա՛խ, թող արտասուքն իմ՝ մարած աչքից շեղեղի նման թափուի դառնագին։

Թէ՛ սի՛րտ իմ, դու դեռ այնքան աննկուն, Որ այս ցաւին էլ պիտի դիմանաս . . . Թէ՛ այնքան է դեռ քո յոյսն հաստատուն։

Որ սպասում ես թէ՛ կը շողայ արեւ, Նոր ոյժ ու նոր կեանք դարձեալ կ'ստանաս, Դարձեալ կը ծաղիկ զարուն քո առջև . . .

Ե. ՅՈՂԱՆՆՈՍՅԱՆ.

